

## Առևտրային քաղաքականությունը մենաշնորհների դեպքում

Շուկան ոչ կատարյալ մրցակցային է, երբ արտադրողները կարող են ներգործել իրացման գնի վրա: Ոչ կատարյալ մրցակցային շուկայում պահանջարկի կորը վարընթաց է, ինչի շնորհիվ արտադրողը կարող է սահմանել սահմանային հասույթից բարձր գին:

Ոչ կատարյալ մրցակցային շուկայում արտադրողների թիվը սահմանափակ է (ինչպես զուտ մոնոպոլիայի կամ օլիգոպոլիայի դեպքում), կամ էլ ապրանքները տարբերակված են (ինչպես մոնոպոլիստական մրցակցության դեպքում):

Երբ շուկաները կատարյալ մրցակցային են, ապա *փոքր* երկրի կողմից առևտրի սահմանափակումների կիրառման դեպքում երկրի բարեկեցությունը նվազում է: Իսկ *մեծ* երկրի կողմից առևտրի սահմանափակումների կիրառումը թեպետ, այլ հավասար պայմաններում, կարող է բարելավել երկրի բարեկեցությունը (քանի որ առևտրի պայմանները բարելավվում են), սակայն հաջորդող առևտրային պատերազմն անխուսափելիորեն նվազեցնում է բարեկեցությունը:

Բազմաթիվ երկրներ, ինչպես՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան, Հրվ Կորեան, Թայվանը, Չինաստանը նախկինում կիրառել են բարձր մաքսատուրքեր: Օրինակ՝ 19-րդ դարում ԱՄՆ-ում միջին մաքսատուրքը տատանվել է 10%-ից 50% միջակայքում: Երկրորդ համաշխարհայինից հետո ԱՄՆ-ի առաջնորդությամբ ընդհանուր քաղաքականությունը եղել է առևտրի ազատականացումը:

	Միջին կշռված մաքսադրույքը (%) 1992թ / 2016թ	Համախառն ներքին արդյունքը մեկ շնչի հաշվով (ընթացիկ գներով, դոլար) 1962թ / 2016թ
Չինաստան	32% / 3.5%	71 / 8,123
Բրազիլիա	15.7% / 8%	260 / 8,650
ԱՄՆ	4% / 1.6%	3,240 / 57,640
Հնդկաստան	27.5% / 6.3%	89 / 1,710
Հայաստան	___ / 2.2%	370 (1992թ) / 3,615
Հրվ. Կորեա	8.5% / 7.7%	106 / 27,540
Ճապոնիա	3.9% / 1.4%	635 / 38,900
Ռուսաստան	___ / 3.4%	3,100 / 8,750

1980-ականներին Բարբարա Սփենսերը և Ջեյմս Բրենդերը առաջադրեցին «ստրատեգիական առևտրային քաղաքականության» տեսությունը: Վերջինը ելնում էր նրանից, որ կառավարության առևտրային սահմանափակումները կարող են ստրատեգիական առավելություն հաղորդել ոչ կատարյալ մրցակցային շուկաներում գործող տեղական արտադրողներին, ինչը ժամանակի ընթացքում նրանց հնարավորություն կընձեռի արդյունավետորեն դիմակայել օտարերկրյա մրցակցությանը և առավելության հասնել գլոբալ շուկայում:


1990-ականներին, սակայն, «ստրատեգիական առևտրային քաղաքականությունը» կորցրեց իր տեսական գրավչությունը, հատկապես այն պատճառով, որ կասկածելի է

կառավարության կարողությունը՝ արդյունավետորեն (առանց կոռուպցիայի) միջամտել տնտեսության գործունեությանը:

Մաքսատիրքի և քվոտայի ազդեցությունը տեղական մենաշնորհի դեպքում

Համարում ենք՝ ներքին շուկայում առկա է տեղական մոնոպոլիստ, որն արտադրում է համասեռ ապրանք:

Գծանկար 1



Ավտարկիայի հավասարակշռությունում տեղական մենաշնորհը շահույթի առավելարկման համար կարտադրի  $A$  կետում (գծ. 1), քանի որ այն համապատասխանում է  $MR = MC$  կետին:  $A$  կետում գինը գերազանցում է սահմանային ծախսին:

Եթե մենաշնորհի փոխարեն լինեն կատարյալ մրցակցություն, և համապատասխանորեն՝ արտադրողները լինեին բազմաթիվ, բայց ունենային ծախսերի նույն կառուցվածքը, ինչ որ մենաշնորհը, ապա հավասարակշռությունը կլիներ  $B$  կետում: Քանի որ ծախսերի կառուցվածքը նույնն է, ապա ճյուղի սահմանային ծախսի կորը կհամընկներ մենաշնորհի սահմանային ծախսի կորին, և  $MC$  կորը կլիներ մրցակցային ճյուղի առաջարկի կորը:  $B$  կետում գինը հավասար է սահմանային ծախսին, ինչպես պահանջում է կատարյալ մրցակցային շուկայի հավասարակշռությունը:

Այսպիսով՝ կատարյալ մրցակցության համեմատ տեղական մենաշնորհի գինն ավելի բարձր է, իսկ թողարկումն ավելի ցածր է:

Պարզենք փոքր երկրում առևտրի ազատականացման ազդեցությունը: Քանի որ երկիրը փոքր է, ապա միջազգային գինը նրա համար տրված է:

Համաշխարհային գինը  $P^W$  է (գծ. 2):  $X^*$ -ը արտերկրի արտահանման առաջարկն է: Այն բացարձակ առաձգական է:

Եթե տեղական մենաշնորհը փորձի սահմանել  $P^W$ -ից բարձր գին, ապա սպառողները կանցնեն ներմուծման սպառմանը: Հետևաբար՝  $X^*$ -ը տեղական մենաշնորհի համար

պահանջարկի նոր կորն է, և  $P^W$ -ն առավելագույն գինն է, որ տեղական մենաշնորհը կարող է սահմանել ազատ առևտրի դեպքում:


Քանի որ պահանջարկի նոր կորը հորիզոնական է, ապա համապատասխան սահմանային հասույթի կորը՝  $MR^*$ , համընկնում է դրան:

Առավելագույն շահույթ ստանալու համար տեղական մենաշնորհը կարտադրի  $C$  կետում, որում  $MC = MR^*$ : Քանի որ առևտուրն ազատ է, ապա տեղական պահանջարկի և առաջարկի տարբերությունը՝  $D_1 - S_1 = M_1$ , երկիրը կներմուծի:

Եթե շուկան լիներ կատարյալ մրցակցային ապա ազատ առևտրի դեպքում ճյուղը կարտադրեր միննույն  $S_1$  քանակը (այդ քանակի դեպքում համաշխարհային գինը՝  $P^W$ , հավասար է ճյուղի սահմանային ծախսին, իսկ կատարյալ մրցակցային շուկայում սահմանային ծախսի կորը ճյուղի առաջարկի կորն է):

Դրանով իսկ՝  $C$ -ն ազատ առևտրի հավասարակշռության կետ է և՛ տեղական մենաշնորհի, և՛ կատարյալ մրցակցային ճյուղի դեպքում:

Գծանկար 2



Այսպիսով՝ ազատ առևտուրը չեզոքացնում է տեղական մենաշնորհի՝ գնի վրա ներգործելու կարողությունը: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ ազատ առևտրի շնորհիվ տեղական մենաշնորհի համար պահանջարկի կորը դառնում է բացարձակ առաձգական:

*Ջուզահեռը մոնոպոլիստական մրցակցության մոդելի հետ:* Երբ առևտուրն ազատականցվում է, ապա մոնոպոլիստական մրցակցության շուկայում արտադրողի պահանջարկի կորը դառնում է ավելի առաձգական: Արդյունքում՝ երկարաժամկետ հավասարակշռությունում ձեռնարկության թողարկումն ընդլայնվում է, իսկ գինը նվազում է:

Նմանատիպ փոփոխություններ (գնի անկում, թողարկման աճ) տեղի են ունենում երբ տեղական մենաշնորհի դեպքում առևտուրն ազատականացվում է: Բայց քանի որ ապրանքը

համասեռ է (ի տարբերություն մոնոպոլիստական մրցակցության մոդելի, որում ապրանքները տարբերակված են), ապա պահանջարկի կորը դառնում է *բացարձակ* առաձգական, և մենաշնորհը ցուցաբերում է միևնույն վարքը, ինչ որ ազատ առևտրի դեպքում կցուցաբերեր կատարյալ մրցակցային ճյուղը:


*Մաքսատուրքի ազդեցությունը*

Մաքսատուրքի դեպքում տեղական գինը  $P^W$ -ից բարձրանում  $P^W + t$  (գծ. 3): Առավելագույն շահույթ ստանալու համար մենաշնորհն արտադրում է  $D$  կետում, որում  $MC = MR^{**}$ :

Ներմուծումը կրճատվում է մինչև  $D_2 - S_2 = M_2$ :

Այսպիսով՝ մաքսատուրքի հետևանքով տեղական մենաշնորհը բարձրացնում է գինը և ընդլայնում է թողարկումը: Համընթաց կրճատվում է պահանջարկը, և ներմուծումը նվազում է:

Գծանկար 3



Եթե մենաշնորհի փոխարեն լիներ կատարյալ մրցակցային ճյուղ, ապա հավասարակշռությունը կհաստատվեր միևնույն  $D$  կետում: Քանի որ տեղական մենաշնորհը չի կարող սահմանել  $P^W + t$ -ից բարձր գին, ապա ցուցաբերում է նույն վարքը, ինչը կցուցաբերեր կատարյալ մրցակցային ճյուղը:

Բարեկեցության վրա մաքսատուրքի ազդեցությունը բացասական է: Զուտ բարեկեցությունը նվազում է  $b + d$  տիրույթի չափով:

Սպառողի ավելցուկ	$-(a + b + c + d)$
Արտադրողի ավելցուկ	$+a$
Կառավարության մաքսային եկամուտ	$+c$
Զուտ բարեկեցություն	$-(b + d)$


Քվոտայի և մաքսատուրքի համեմատումը: Քվոտայի դեպքում սպառողների բարեկեցության անկումը և տեղական մենաշնորհի ստացած օգուտն անհամեմատ ավելի մեծ են, քան մաքսատուրքի դեպքում:

Դիցուք՝ մաքսատուրքի փոխարեն սահմանվում է քվոտա  $\Delta$ իչտ այն չափով, որքան կազմում է ներմուծումը մաքսատուրքի դեպքում՝  $Քվոտա = M_2 = D_2 - S_2$ :

Քանի որ քվոտայի դեպքում ներմուծման քանակը ֆիքսված է, ապա տեղական մենաշնորհի փաստացի պահանջարկը դառնում է  $D - Քվոտա = D - M_2$  կորը (գծ. 4):

Ի տարբերություն մաքսատուրքի՝ քվոտայի դեպքում տեղական մենաշնորհը պահպանում է գնի վրա ներգործելու կարողությունը: Այսպես՝ առավելագույն շահույթ ստանալու համար տեղական մենաշնորհը կարտադրի  $E$  կետում, որի դեպքում  $MR^{***} = MC$  ( $MR^{***}$  համապատասխանում է պահանջարկի  $D - M_2$  կորին): Համապատասխան գինը կկազմի  $P_{քվոտա}$ , իսկ թողարկումը՝  $S_3$ :

Գծանկար 4



Քվոտայի դեպքում գինն ավելի բարձր է, քան մաքսատուրքի դեպքում՝  $P_{քվոտա} > P^W + t$ , քանի որ քվոտան լրանալուց հետո (այսինքն՝ քվոտայի չափով ներմուծումից հետո) տեղական մենաշնորհը ամբողջովին վերահսկում է շուկայի մնացյալ մասը: Արդյունքում՝ կարող է ներգործել գնի վրա և սահմանել շահույթն առավելարկող գին:

Այսպիսով՝ երբ առկա է տեղական մենաշնորհ, և կառավարությունը սահմանում է քվոտա  $\Delta$ իչտ այն մեծության, որքան կլինեն ներմուծումը մաքսատուրքի դեպքում, ապա քվոտայի դեպքում հավասարակշիռ գինը լինում է ավելի բարձր, քան՝ մաքսատուրքի դեպքում:

Իսկ երբ շուկաները կատարյալ մրցակցային են, ապա գնի և քանակի առումով մաքսատուրքի ու քվոտայի ազդեցությունները նույնական են:

Տեղական մենաշնորհի դեպքում թողարկման քանակը քվոտայի դեպքում ( $S_3$ ) միարժեքորեն փոքր է, քան մաքսատուրքի դեպքում ( $S_2$ ), քանի որ քվոտայի դեպքում գինն ավելի բարձր է: Իսկ ազատ առևտրի հավասարակշռության համեմատ  $S_3$ -ը կարող է ավելի մեծ կամ ավելի փոքր լինել:

Երբ ավելի փոքր է նշանակում է՝ քվոտան տեղական աշխատուժին չի պաշտպանում արտաքին մրցակցությունից, այնինչ քվոտաների սահմանման հիմնական պատրվակը հենց ներքին զբաղվածության ապահովումն է:

Քվոտայի դեպքում սպառողների բարեկեցության անկումը շատ ավելի մեծ է, քանի որ գինը բարձրանում է, մինևույն ժամանակ, տեղական մենաշնորհը կորզում է ավելի մեծ շահույթ:

Քվոտայի դեպքում ներմուծման արտոնություն ունեցողը ստանում է քվոտայի ռենտա: Վերջինը հետևանք է նրա, որ տեղական շուկայի գինը գերազանցում է ազատ շուկայական գնին, այն է՝ միջազգային գնին: Քվոտայի ռենտան հավասար է


$$(P_{\text{քվոտա}} - P^W) \times \text{քվոտա}$$

Մաքսատուրքի ազդեցությունը օտարերկրյա մենաշնորհի դեպքում

Համարենք՝ տեղական շուկան ամբողջովին մատակարարվում է օտարերկրյա մենաշնորհի կողմից: Դիցուք՝ վերջինի սահմանային ծախսը հաստատուն է և հավասար է  $MC^*$  (գծ. 5):

Ազատ առևտրի դեպքում օտարերկրյա մենաշնորհը տեղական շուկայում իր շահույթը կառավելարկի, եթե տեղական շուկա արտահանման քանակը համապատասխանի  $F$  կետին, քանի որ այդ կետում տեղական շուկայի սահմանային հասույթի  $MR$  կորը հասնում է սահմանային ծախսի  $MC^*$  կորին: Արդյունքում՝ օտարերկրյա մենաշնորհի կողմից տեղական շուկա արտահանման քանակը կկազմի  $D_1$ , իսկ իրացման գինը՝  $P_1$ :

Գծանկար 5



Մաքսատուրքի ազդեցությունը տեղական գնի վրա: Երբ ներմուծող երկիրը սահմանի ներմուծման  $t$  մաքսատուրք, ապա օտարերկրյա մենաշնորհի արտահանման սահմանային

ծախսը նույնքանով կբարձրանա՝  $MC^* + t$ : Արդյունքում՝ տեղական շուկայում գինը կբարձրանա մինչև  $P_2$ :

Քանի որ  $MR$  կորն ավելի ուղղահիգ է, քան  $D$  կորը, ապա գինը կբարձրանա նվազ չափով, քան մաքսատուրքն է: Արդյունքում՝ զուտ գինը (գինն առանց մաքսատուրքի), որն օտարերկրյա մոնոպոլիստը ստանում է, կրճատվում է: Նախքան մաքսատուրքը զուտ գինը  $P_1$  էր, մաքսատուրքից հետո՝  $P_3 = P_2 - t$ :

Քանի որ երկիրը ներմուծման դիմաց վճարում է ավելի ցածր գին, ապա նրա առևտրի պայմանները բարելավվել են:

Բովանդակային առումով նկարագրված մոդելի եզրահանգումը համարժեք է մեծ երկրի կողմից ներմուծման մաքսատուրքի սահմանմանը:

Օտարերկրյա մենաշնորհը մաքսատուրքն ամբողջությամբ տեղական սպառողներին չի փոխանցում (այսինքն՝ գինը մաքսատուրքի ամբողջական մեծությամբ չի բարձրացնում), քանի որ այդ դեպքում իրացման կրճատումը ավելի մեծ կլիներ, ինչը նրան ձեռնտու չէ:

Բարեկեցության զուտ փոփոխությունը հավասար է  $c - b$ : Համեմատաբար փոքր մաքսատուրքի դեպքում այն սովորաբար դրական է ( $c - b > 0$ ):  $c$  արտահայտում է առևտրի պայմանների բարելավումը, իսկ  $b$ ՝ սպառման անարդյունավետության կորուստը:

Բարեկեցության զուտ փոփոխությունը հետևանք է նրա, որ սպառողների ավելցուկը կրճատվել է  $a + b$  չափով, իսկ կառավարության եկամուտն աճել է  $a + c$  չափով:

Սպառողի ավելցուկ	$-(a + b)$
Արտադրողի ավելցուկ	0
Կառավարության մաքսային եկամուտ	$+(a + c)$
Զուտ բարեկեցություն	$c - b$

Հակազնազցումային մաքսատուրք

Երբ շուկաները ոչ կատարյալ մրցակցային են, արտադրողը հնարավորություն ունի տարբեր շուկաներում տարբեր գին սահմանել: Մասնավորապես, երբ արտադրողի՝ արտերկրում սահմանած գինն ավելի ցածր է, քան ծագման երկրում գինն է, ապա առկա է գնազցում: Գնազցում առկա է նաև, երբ արտերկրում գինը ցածր է արտահանման այլ շուկաների գնից կամ արտադրողի միջին ծախսից:

ԱՀԿ համաձայնագրով (GATT, հոդված 6) ներմուծող երկիրը կարող է գնազցվող ապրանքի ներմուծման նկատմամբ սահմանել մաքսատուրք, եթե գնազցումը էական նյութական վնաս է հասցնում տեղական մրցակից արտադրությանը: Այսինքն՝ հակազնազցումային մաքսատուրքերը թույլատրելի են, չնայած որ դրանք հակասում են առավել բարենպաստության սկզբունքին:

*Հիմնական հակազնազցումային միջոցներ կիրառող երկրներն են Հնդկաստանը (1995-2016թթ-ին կիրառել է 609 հակազնազցումային միջոց), ԱՄՆ (395), Եվրոպական Միությունը (314), Արգենտինան (241), Բրազիլիան (241), Չինաստանը (192), Թուրքիան (179):*

Թիվ մեկ երկիրը, որի նկատմամբ կիրառվում են հակազնազցումային միջոցներ, Չինաստանն է. 1995-2016թթ-ի ընդհանուր 3405-ից նրա նկատմամբ կիրառվել է 866 հակազնազցումային միջոց (25%): Հաջորդում են Հրվ Կորեան (239), Թայվանը (191), ԱՄՆ (177):

2009թ-ին Եվրոպական Միությունը հակազնազցումային մաքսատուրք (13.4%) սահմանեց Հայաստանից Ռուսալ-Արմենալի ալյումինե սովարաթղթի ներմուծման նկատմամբ:

Քանի որ Հայաստանը ԵԱՏՄ անդամ է, ապա Ռուսաստանի 2015-16թթ-ին սահմանած 9 հակազնազցումային միջոցները վերաբերում են նաև Հայաստանին:

Համարենք՝ օտարերկրյա մենաշնորհը իրացնում է  $l'$  իր տեղական շուկայում,  $l'$  մեր շուկայում (որն իր համար արտահանման շուկա է):


Իր տեղական շուկայում մենաշնորհի պահանջարկը  $D^*$  է, իսկ համապատասխան սահմանային հասույթը՝  $MR^*$  (գծ. 6): Մեր արտահանման շուկայում մրցակցությունը թեժ է, և մենաշնորհի համար արտահանման պահանջարկը՝  $D$ , բացարձակ առաձգական է: Մեր արտահանման շուկայում գինը  $P$  է: Քանի որ պահանջարկը բացարձակ առաձգական է, ապա արտահանման սահմանային հասույթի  $MR$  կորը համընկնում է արտահանման պահանջարկի կորին:

Շահույթն առավելարկվում է, երբ  $MR = MR^* = MC^*$ : Այսինքն՝ սահմանային հասույթը երկու շուկաներում պետք է լինի նույնը, և դրանք պետք է հավասար լինեն սահմանային ծախսին:

Հավասարակշռությունում օտարերկրյա մենաշնորհը կարտադրի  $Q_1$  քանակ, որից  $Q_2$  քանակը կիրացնի իր տեղական շուկայում՝  $P^*$  գնով, իսկ մնացածը՝  $Q_1 - Q_2$ , կարտահանի  $P$  գնով: Քանի որ  $P < P^*$ , ապա առկա է գնազցում:

Մեր օրինակում՝ արտահանման  $P$  գինն ավելի ցածր է, քան միջին ծախսն է՝  $P < AC_1$ , բայց իր տեղական շուկայի  $P^*$  գինը միջին ծախսից բարձր է՝  $AC_1 < P^*$ :

Գծանկար 6



Համոզվենք, որ միջին ծախսից ցածր գնով արտահանումը կարող է լինել շահութաբեր:



Դիցուք օտարերկրյա մենաշնորհի ֆիքսված ծախսը \$100 է, սահմանային ծախսը՝ \$10, իր տեղական գինը՝ \$25, իր տեղական իրացումը՝ 10 միավոր:

Իր տեղական շուկայում իրացումից շահույթը կկազմի \$50.

$$R = \underbrace{(25 \times 10)}_{\text{հասույթ}} - \underbrace{(10 \times 10)}_{\text{փոփոխուն ծախս}} - \underbrace{100}_{\text{ֆիքսված ծախս}} = 50$$

Իսկ միջին ծախսը  $200 / 10 = \$20$ :

Արդյո՞ք շահեկան է արտահանումը, երբ արտահանման գինը միջին ծախսից ցածր է: Դիցուք արտահանման գինը \$13 է, իսկ արտահանման քանակը՝ 10 միավոր:

Օտարերկրյա մենաշնորհի ընդհանուր շահույթը (և՛ արտահանումից, և՛ տեղական շուկայում իրացումից) կկազմի \$80:

$$R = \underbrace{(25 \times 10 + 13 \times 10)}_{\text{հասույթ}} - \underbrace{(10 \times 20)}_{\text{փոփոխուն ծախս}} - \underbrace{100}_{\text{ֆիքսված ծախս}} = 80$$


Իսկ միջին ծախսը՝  $300 / 20 = \$15$ :

Շահույթն արտահանումից աճում է, քանի որ լրացուցիչ միավորներն իրացվում են \$13-ով, բայց արտադրվում են \$10 սահմանային ծախսով: Այսինքն՝ գնագցումը օտարերկրյա մենաշնորհի համար շահեկան է:

*Հակազնազցումային մաքսատուրքը* հաշվարկվում է իբրև օտարերկրյա մենաշնորհի իր շուկայում տեղական գնի և մեր շուկայում արտահանման գնի տարբերություն: Երբ օտարերկրյա մենաշնորհը իր տեղական շուկայում իրացում չունի, ապա կարող են կիրառվել երրորդ երկրի շուկայում օտարերկրյա մենաշնորհի իրացման գինը, կամ էլ մենաշնորհի միջին ծախսը:

Մեր օրինակում՝ հակազնազցումային մաքսատուրքը կկիրառվի  $25 - 13 = \$12$  տարբերության նկատմամբ: Հակառակ պարագայում այն պետք է կիրառվեր  $15 - 13 = \$2$  տարբերության նկատմամբ:

Գծանկար 7



Հակազնագցումային մաքսատուրք սահմանելու սպառնալիքն ինքնին ստեղծում է օտարերկրյա մենաշնորհի կողմից արտահանման շուկայում գինը բարձրացնելու խթան:

Այսպես, երբ օտարերկրյա մենաշնորհը հակազնագցումային մաքսատուրքի սպառնալիքի ներքո գինը բարձրացնում է  $P_1$ -ից  $P_2$ , ապա ներմուծող երկրի արտադրողները շահում են  $a$  տիրույթը, իսկ սպառողները կորցնում են  $a + b + c + d$  տիրույթը: Կառավարությունը մաքսային եկամուտ չունի, և երկրի զուտ կորուստը կազմում է  $-(b + c + d)$ : Վերջինն ավելի բարձր է, քան կլիներ մաքսատուրքի դեպքում զուտ կորուստը, որը  $-(b + d)$  է:

Քանի որ մաքսատուրք սահմանելու սպառնալիքը օտարերկրյա արտադրողին հաճախ ստիպում է գինը բարձրացնել, ապա տեղական արտադրողները հակված են շահագործել հակազնագցումային հետաքննություն նախաձեռնելու հնարավորությունը, նույնիսկ, երբ գնագցում իրականում առկա չէ:

Տնտեսության նորակազմ ճյուղի պաշտպանության հիմունքները

Ենթադրենք՝ նորակազմ ճյուղը չի կարողանում դիմակայել արտաքին մրցակցությանը, քանի որ ճյուղի միջին ծախսերը միջազգային գնից բարձր են: Եթե կառավարությունն առևտրի սահմանափակումներ չկիրառի (օրինակ՝ մաքսատուրք, լրավճար), ապա ճյուղը կդադարի գոյություն ունենալ:

Հայտնի է որ, եթե ճյուղը գոյատևի և արտադրությունն ընդլայնի, ապա ապագայում ճյուղի միջին ծախսերը կնվազեն, և ճյուղը կդառնա եկամտաբեր: Ծախսերի նվազումը կպայմանավորվի նրանով, որ ժամանակի ընթացքում ճյուղը կսովորի արտադրությունն առավել արդյունավետ կազմակերպելու եղանակը:

Բայց եթե ճյուղը ապագայում լինելու է եկամտաբեր, ապա կարող է պարտք վերցնել իր ապագա եկամուտների հաշվին: Այդ դեպքում կառավարության միջամտության կարիք չի լինի: Սակայն եթե կապիտալի շուկան աղճատված է, ապա բանկերը վարկ չեն տրամադրի: Այդ դեպքում միայն իմաստ ունի, որ կառավարությունն օրինակ՝ ներմուծման մաքսատուրք սահմանելու միջոցով պաշտպանի նորակազմ ճյուղը:

Որպեսզի նորակազմ ճյուղի պաշտպանությունն արդարացված լինի, անհրաժեշտ է նաև, որ ներկայում սահմանված մաքսատուրքն ապագայում հանգեցնի ճյուղի բոլոր ձեռնարկությունների կամ այլ ճյուղերի ձեռնարկությունների միջին ծախսերի կրճատմանը: Նման բնույթի արտաքին էֆեկտը (externality) դրսևորվում է այն դեպքում, երբ օրինակ, որևէ ձեռնարկության հաջողվում է ճեղքում իրագործել, ապա մյուս ձեռնարկությունները արագորեն կրկնօրինակում են նոր ձևավորված գիտելիքը:

Այսպիսով, եթե մաքսատուրքի շնորհիվ ձեռնարկությունները, լինելով պաշտպանված արտաքին մրցակցությունից, ներդրումներ են կատարում գիտահետազոտական աշխատանքներում, ինչի շնորհիվ ձևավորվում է նոր գիտելիք, որն այնուհետև արտահոսում է, ապա մաքսատուրքը հանգեցնում է դրական արտաքին էֆեկտի (positive externality):

Նկատենք, քանի որ մի ձեռնարկության ճեղքումը կրկնօրինակվում է մյուսների կողմից, ապա նորարարության ոլորտում ներդրումներ իրականացնելու խթանները թույլ են: Այդ առումով՝ մաքսատուրքը կատարում է ներդրման դիմաց փոխհատուցման դեր:

Գիտելիքի արտահոսքը նշանակում է նաև, որ շուկայում առկա է երկրորդ աղճատումը՝ մտավոր սեփականությունը պաշտպանելու մեխանիզմի ձախողումը:

Այսպիսով՝ կապիտալի շուկայի և մտավոր սեփականության պաշտպանության ձախողումները ձևավորում են կառավարության միջամտության տեսական հենքը: Բայց գործնականում կառավարության միջամտությունը, սովորաբար, շատ ավելի մեծ ձախողումների պատճառ է դառնում (կոռուպցիա):


Բացի այդ, կառավարությունը դժվար թե բանկերից ավելի լավ կարողանա պարզել, թե որոնք են ապագա հաջողակ ճյուղերը, կամ կարողանա գնահատել դրական արտաքին էֆեկտների հնարավորությունը:

Բայց նույնիսկ երբ կառավարությունն անհրաժեշտ չափով տեղեկացված է, միջամտության համար անհրաժեշտ է, որ միջին ծախսերի կրճատման արդյունքում ճյուղի ստացած ապագա օգուտը գերազանցի ներկա հանրային ծախսին:

Շեշտենք՝ միջին ծախսերի կրճատման փաստարկը հիմնված է սովորելու շնորհիվ, ոչ թե ծավալի աճող էֆեկտի միջոցով ծախսերի նվազման վրա: Եթե միջին ծախսերը կրճատվեն ծավալի աճող էֆեկտի միջոցով, ապա երբ կառավարությունը դադարեցնի միջամտությունը, արտադրությունը կնվազի, միջին ծախսերը կբարձրանան, և ճյուղը դարձյալ կդառնա ոչ մրցունակ:

Արդյունքում՝ կառավարության միջամտությունը հիմնավոր է, եթե սովորելու և կամ գիտելիքի արտահոսքի շնորհիվ ընդհանուր միջին ծախսերի կորը տեղաշարժվում է ներքև:

Գծանկար 8



*Հավասարակշռությունը ազատ առևտրի դեպքում:* Համարում ենք՝ երկիրը փոքր է, և հետևաբար՝ միջազգային գինը՝  $P^W$ , տրված է: Ուստի՝  $P^W$  նաև պահանջարկի ու սահմանային հասույթի կորերն են:

Գիտենք, որ ազատ առևտրի դեպքում տեղական մենաշնորհը և կատարյալ մրցակցային ճյուղը միանման վարք են դրսևորում:

Ազատ առևտրի դեպքում երկիրը կարտադրեր  $Q_1$  քանակ (զձ. 8), քանի որ այդ քանակի դեպքում  $MR = MC$ : Բայց քանի որ միջին ծախսերը  $P^W$ -ից բարձր են, ապա փաստացի արտադրությունը կլինի զրո:

*Հավասարակշռությունը մաքսատուրքի դեպքում:* Եթե կառավարությունը սահմանի  $t$  մաքսատուրք, ապա ներքին շուկայում գինը կկազմի  $P^W + t$ : Այդ դեպքում տեղական արտադրությունը կլինի դրական և կկազմի  $Q_3$ : Ճյուղը տնտեսական շահույթ չի ստանա, սակայն կգոյատևի:

Եթե կառավարությունը սահմաներ համարժեք քվոտա, ապա տեղական մենաշնորհի գինը կլիներ ավելի բարձր, իսկ թողարկումը՝ ավելի ցածր:

Բայց կանխավարկածն այն է, որ արտադրողն այնքան ավելի շատ է սովորում, որքան ավելի շատ է արտադրում: Ուստի՝ նպատակահարմար է, որ կառավարությունը կիրառի մաքսատուրք, ոչ թե քվոտա:

Արտադրողի միջին ծախսերի կորը երկարատև ժամանակաշրջանում կտեղաշարժվի ներքև, և արտադրությունը կդառնա եկամտաբեր:

Եթե առևտուրը դարձյալ ազատականացվի, ապա միջազգային  $P^W$  գնի դեպքում արտադրությունն այլևս վնասաբեր չի լինի, և կկազմի  $Q_5$ :

Մաքսատուրքի հետևանքով ներկայում բարեկեցության զուտ կորուստը հավասար է  $(b + d)$  տիրույթին: Բայց ապագայում տեղական արտադրողները ստանալու են  $e$  տիրույթին հավասար ավելցուկ:

Այսպիսով, եթե անտեսում ենք մրցակից երկրների հավանական հակազդեցությունը, ապա նորակազմ ճյուղի պաշտպանությունն արդարացված է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա բավարարման դեպքում.

1. ապագայում, երբ պաշտպանությունը դադարեցվի, ճյուղը դառնալու է մրցունակ,
2.  $e$ -ի բերված արժեքն ավելի մեծ է, քան  $b + d$ -ի արժեքն է: